ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[5]-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**««Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լղրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	
2.	ՀՀ կառավարություն	**««Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետին հաջորդում է 2-րդ կետ, հետեւաբար առաջարկում ենք ապահովել կետերի համարակալման հաջորդականությունը:	Ընդունվել է: Ապահովվել է նախագծի ճիշտ համարակալումը:	
3"	ՀՀ կառավարություն	**««Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում առաջարկում ենք «կառավարություն» ձեւակերպումն համապատասխանեցնել «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում կիրառված հասկացություններին, մասնավորապես կիրառել «Կառավարություն» կամ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացությունները՝ հաշվի առնելով	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է՝ «կառավարություն» բառը փոխարինելով «Կառավարություն» բառով:	

			Սահմանադրությամբ սահմանված «Կառավարություն» հասկացությունները, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:		
4.	ՀՀ կառավարություն	**««Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում սահմանված է հետեւյալը. « Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործառույթի իրականացման կարգը սահմանում է կառավարությունը:»: Վերոնշյալ կարգավորման վերաբերյալ, հարկ ենք համարում նշել հետեւյալը. 1) «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում բացակայում է Կառավարության կողմից սահմանվող կարգի ընդունման նախատեսվող ժամկետի վերաբերյալ անցումային դրույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ՝ 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսվել է 2-րդ մաս՝ կառավորության կողմից սահմանվող կարգի ժամկետը նախատեսելով ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետ:	

			լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասի Կառավարության կողմից սահմանավող կարգի վերաբերյալ առաջարկում ենք անցումային դրույթով նախատեսել Կառավարության կողմից սահմանվող կարգի ընդունման նախատեսվող ժամկետը:		